ՍՄԿԿ XXVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ

1981 թ. փետրվարի 23-ից մարտի 3-ը տեղի ունեցավ ՍՄԿԿ XXVI համագումարը, որը քննարկեց կոմունիստական շինարարության արդի փուլի հրատապ պրոբլեմները։

Համագումարը լսեց և քննարկեց ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևի զեկուցումը՝ ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետվությունը համագումարին և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը, որով հանդես եկավ հանձնաժողովի նախագահ Գ. Ֆ. Սիգովը։ ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1981—1985 թթ. և մինչև 1990 թ. ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղությունների մասին համագումարում զեկուցեց ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ա. Տիխոնովը։ Համագումարն ընտրեց կուսակցության զեկավար մարմիններ։

ՍՄԿԿ XXVI համագումարի ողջ աշխատանքը ներթափանցված էր լենինյան ոճով։ Այն գիտականորեն հիմնավորեց կուսակցության գործունեության ծրագիրը 1980-ական թվականների համար։ Ծրագրային նշանակություն ունի Լ. Ի. Բրեժնևի զեկուցումը։ Դա ստեղծագործական մարքսիզմի աչքի ընկնող փաստաթուղթ է, ծանրակշիռ ավանդ գիտական կոմունիզմի տեսության ու պրակտիկայի մեջ։ Զեկուցման մեջ լուսաբանված է կուսակցության բազմակողմանի գործունեությունը նախորդ համագումարի որոշումները կյանքի կոչելու ուղղությամբ, ցույց են տրված սովետական ժողովրդի նվաճումները վերջին տասնամյակում, տրված է արդի միջազգային դրության և համաշխարհային հեղափոխական պրոցեսի համակողմանի ու սպառիչ վերլուծությունը, բացահայտված են Սովետական Միության տնտեսական զարգացման, խաղաղության ու սոցիալական առաջադիմության հեռանկարները։

ՍՄԿԿ XXVI համագումարն ամբողջովին ու լիովին հավանություն տվեց կուսակցության Կենտրոնական կոմիտեի լենինյան կուրսին և պրակտիկ գործունեությանը, ինչպես նաև հաշվետվությանը։ Համագումարը բոլոր կուսակցական կազմակերպություններին առաջարկեց իրենց աշխատանքում զեկավարվել ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում Լ. Ի. Բրեժնևի զեկուցման մեջ առաջ քաշված դրույթներով ու խնդիրներով։

Համագումարը մեծ ուշադրություն նվիրեց միջազգային դրության հարցերին։ ՍՄԿԿ և սովետական պետության միջազգային քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը սոցիալիզմի երկրների հետ բարեկամության ու համագործակցության ամրապնդումն է։ Կենտկոմի հաշվետվության մեջ բացահայտված են այդ համագործակցության բազմազան ու բազմապիսի ձևերը։ Անցած հնգամյակում ավելի ընդլայնվեց ու հարստացավ Սովետական

Միության համագործակցությունը սոցիալիստական ընկերակցության երկրների հետ։ «Սոցիալ-տնտեսական զարգացման, միջազգային քաղաքականության բոլոր խոշոր պրոբլեմների առնչությամբ,— համագումարում ասաց Լ. Ի. Բրեժնևը,— մեր միջև հաստատվել է հայացքների սկզբունքային միասնություն։ Դա եղբայրական կոմունիստական կուսակցությունների մշտական փոխգործողության արգասիքն է, մեր ընդհանուր նվաճումը»[1]։ Այդ տարիներին տեղի է ունեցել բարձր մակարդակի 37 բարեկամական հանդիպում Ղրիմում, կուսակցական-կառավարական պատվիրակությունների կանոնավոր փոխանակում է կատարվել, ավանդույթ են դարձել սոցիալիստական ընկերակցության երկրների կոմունիստական կուսակցությունների կենտկոմների քարտուղարների խորհրդակցությունները։ Դրանցում քննարկվել են մեր հարաբերությունների զարգացման հեռանկարները, համաշխարհային քաղաքականության հանգուցային պրոբլեմները, նախանշվել են ապագայի խնդիրները, ընդհանրացվել է գաղափարական և կազմակերպական-կուսակցական աշխատանքի փորձը այն հաշվով, որ վերջինս դառնա ընդհանուրի սեփականություն։ Անցած ժամանակաշրջանը համոզիչ կերպով ցույց տվեց, որ եվրոպական, ինչպես և ամբողջությամբ վերցրած միջազգային գործերում ինչպիսի ազդեցիկ ու բարերար դեր է խաղում Վարշավայի պայմանագրի կազմակերպության գործունեությունը։ Վարշավայի պայմանագրի Քաղաքական կոնսուլտատիվ կոմիտեն, ավելի վաղ ապահովելով համաեվրոպական խորհրդակցության հրավիրումը, վերջին տարիներս հանդես եկավ մի շարք նոր նախաձեռնություններով, որոնք իրենց վրա գրավեցին հասարակայնության ուշադրությունը։ Դրանց գլխավոր նպատակն է պաշտպանել ու զարգացնել լարվածության թուլացումը։ Մենք բոլոր հիմքերն ունենք ասելու,— համագումարում ասաց Լ. Ի. Բրեժնևը, որ «սոցիալիզմի երկրների ռազմաքաղաքական պաշտպանողական դաշինքը հավատարմորեն է ծառայում խաղաղությանը։ Նա ամեն անհրաժեշտ բան ունի հուսալիորեն պաշտպանելու ժողովուրդների սոցիալիստական նվաճումները։ Եվ մենք ամեն ինչ կանենք, որ այդպես լինի նաև այսուհետև»[2]։

ՍՄԿԿ XXV համագումարից հետո ամրապնդվել ու ընդլայնվել է սոցիալիստական ընկերակցության երկրների տնտեսական համագործակցությունը։ Չնայած գոյություն ունեցող օբյեկտիվ դժվարություններին, ՏՓԽ-ի անդամ երկրների տնտեսության տեմպերը վերջին 10 տարում կրկնապատիկ ավելի բարձր էին, քան կապիտալիստական զարգացած երկրներինը։ Հետևողականորեն իրագործվում և խորացվում է սոցիալիստական տնտեսական ինտեգրացումը։ Անցած հինգ տարում Սովետական Միությունը ՏՓԽ-ի երկրներից ստացել է 90 մլդ ռուբլու ապրանքներ, իսկ մեր մատակարարումները հասել են 98 մլդ-ի[3]։ Սոցիալիստական երկրների տնտեսական համագործակցությունն ավելի կրնդլայնվի այս հնգամյակում։

Սոցիալիստական երկրների զարգացման ընթացքում ծագում են նաև բարդություններ, ներքին ու արտաքին կարգի դժվարություններ, չլուծված խնդիրներ։ Դրանք կարելի է հաղթահարել և հաղթահարվում են ընկերական

---

1 «Սովետական Հայաստան», 24. II. 1981։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

համբերատար քննարկումների հիման վրա, ինտերնացիոնալիզմի դիրքերից։ «Համաշխարհային սոցիալիզմի պատմությունը,— ընդգծվեց համագումարում,— դիտե ամեն տեսակ փորձություններ։ Այդ պատմության ընթացքում եղել են թե՛ բարդ, թե՛ ճգնաժամային պահեր։ Բայց կոմունիստները միշտ էլ համարձակորեն դիմագրավել են հակառակորդի գրոհները և հաղթանակել են։

Այդպես եղել է, այդպես էլ կլինի։ Եվ թող ոչ ոք չկասկածի մեր շահերն ապահովելու, ժողովուրդների սոցիալիստական նվաճումները պաշտպանելու մեր ընդհանուր վճռականությունը։

Մենք պայքարում ենք խաղաղության և ժողովուրդների անվտանգության արդար գործի համար, աշխատավոր մարդկանց շահերի համար։ Մեր կողմն է մարքս-լենինյան ուսմունքի ճշմարտությունը։ Մեր ուժը միասնականությունն ու համախմբվածությունն է»[1]։

Կուսակցության XXV համագումարից հետո անցած տարիները նշանավորվեցին հեղափոխական պայքարի նոր հաղթանակներով։ Հեղափոխություններ տեղի ունեցան Եթովպիայում, Աֆղանստանում, Նիկարագուայում։ Իրանում տապալվեց հակաժողովրդական, միապետական վարչակարգը։ 1970-ական թվականներին ըստ էության ավարտվեց գաղութային կայսրությունների վերացումը։ Հաշվետու ժամանակաշրջանում մեր կուսակցության միջազգային գործունեության կարևոր արդյունքներից մեկը գաղութատիրությունից ազատագրված երկրների հետ համագործակցության նկատելի ընդլայնումն է։ Ազատագրված շատ երկրներում, առաջին հերթին սոցիալիստական կողմնորոշում ունեցող երկրների էկոնոմիկայում և քաղաքական կյանքում, կատարվել են առաջադիմական խոր վերափոխություններ և լույսը տեղաշարժեր։ աստիճանաբար վերացվում են իմպերիալիստական մոնոպոլիաների, տեղական խոշոր բուրժուազիայի դիրքերը, սահմանափակվում է օտարերկրյա կապիտալի գործունեությունը, անցում է կատարվում դեպի արտադրողական ուժերի պլանային զարգացումը։ գյուղում խրախուսվում է կոոպերատիվ շարժումը, բարձրանում է աշխատավորների դերը հասարակական կյանքում։ Այդ ծրկրների արտաքին քաղաքականությունն ունի հակաիմպերիալիստական բնույթ։ Դրանցում ամրապնդվում են հեղափոխական կուսակցությունները։ Սովետական Միությունը, հավատարիմ պրոլետարական ինտերնացիոնալիզմի ավանդույթներին, համակողմանի օգնություն է ցույց տալիս ազատագրված երկրներին։ ՍՍՀՄ-ը այդ երկրներում կառուցում է խոշոր տնտեսական օբյեկտներ, աջակցում է ինժեներների, տեխնիկների, որակյալ բանվորների, բժիշկների, ուսուցիչների պատրաստման գործում, նպաստում դրանց պաշտպանության ամրապնդմանը։ Լենինյան կուսակցությունը համագումարի բարձր ամբիոնից կրկին հայտարարեց, որ այսուհետև ևս հետևողականորեն կմարի ազատագրված երկրների հետ համագործակցությունը զարգացնելու, համաշխարհային սոցիալիզմի և ազգային-ազատագրական շարժման դաշինքն ամրապնդելու կուրս։

Մեր ժամանակի ամենաազդեցիկ քաղաքական ուժը համաշխարհային կոմունիստական շարժումն է, որը վերջին տարիներին շարունակում էր ընդլայնել իր շարքերը, ամրապնդել ազդեցությունը մասսաների մեջ։ Այժմ աշխարհի 94 երկրներում ակտիվորեն գործում են կոմունիստական կուսակցու-

---

[1] Նույն տեղում։

թյուններ։ Վերջին ժամանակաշրջանի նշանակալից երևույթներից մեկը կապիտալիստական երկրներում կոմունիստական կուսակցությունների ազդեցության աճն է։ Բավական է նշել, որ միայն Արևմտյան Եվրոպայում վերջին 10 տարում կոմունիստների թիվն ավելացել է մոտավորապես 800 հազարով։

Համագումարում և աշխատավորական կոլեկտիվների հետ հանդիպումների ժամանակ ունեցած իրենց ելույթներում եղբայրական կուսակցությունների ներկայացուցիչները պատմեցին աշխարհի տարբեր մասերում կոմունիստական ու բանվորական շարժման նվաճումների մասին։ Ընդգծվեց, որ կոմունիստները իրենց պայքարում ելնում են հեղափոխության, սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման ընդհանուր օրինաչափություններից, իրենց հարաբերություններում ղեկավարվում են յուրաքանչյուր կուսակցության իրավահավասարության և ինքնուրույնության հարգման սկզբունքով, քաղաքականությունը մշակելիս անպայմանորեն հաշվի են առնում սեփական երկրի պատմական առանձնահատկությունները։ Համագումարում տված զեկուցման մեջ Լ. Ի. Բրեժնևը, անդրադառնալով միջազգային կոմունիստական շարժման պրոբլեմներին, ընդգծեց, որ ՍՄԿԿ-ն լավ, բարի հարաբերություններ ունի կոմունիստական կուսակցությունների հսկայական մեծամասնության հետ։ Մենք, ասաց նա, այսուհետև էլ կամրապնդենք այդ հարաբերությունները հանուն մեր ընդհանուր գործի՝ խաղաղության և սոցիալիզմի գործի։

Հաշվետու ժամանակաշրջանում ամրապնդվել է նաև ՍՄԿԿ-ի համագործակցությունը շատ երկրների սոցիալիստական և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների հետ՝ մասնավորապես պատերազմական վտանգի դեմ մղվող պայքարի հարցերում։

Իսկ ինչպիսի՞ն է գրությունը կապիտալիստական աշխարհում, որո՞նք են կապիտալիզմի զարգացման առանձնահատկություններն ու բնորոշ կողմերը մեր օրերում։ Նախ և առաջ, տեղի ունեցավ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի հետագա խորացում։ Կապիտալիզմը, իհարկե, չդադարեցավ իր զարգացման մեջ։ Բայց վերջին 10 տարում նա ապրում է արդեն երրորդ տնտեսական անկումը։

Կապիտալի աշխարհի բնորոշ կողմերից մեկն էլ այն է, որ նկատելիորեն սրվել են սոցիալական հակասությունները։ Վերջին 10 տարում զարգացած կապիտալիստական երկրներում գործազուրկների բանակը կրկնապատկվել է, 1980 թ. հասնելով 19 մլն մարդու։ Շիկացել է դասակարգային պայքարը։ Պաշտոնական տվյալներով, 1970-ական թվականներին գործազուրկների թիվն աճել է ավելի քան մեկ երրորդով, հասնելով քառորդ միլիոն մարդու։ Բնորոշն այն է, որ բանվորական շարժումը մասնակցում են բնակչության ամենատարբեր խավերը և, որ գլխավորն է, աճել է բանվոր դասակարգի հեղինակությունը, բարձրացել նրա դերը՝ որպես աշխատավորների մարտական պայքարի ավանգարդի։

Սրվում են հակասությունները նաև կապիտալիստական երկրների միջև, ուժեղանում է պայքարը շուկայի, հումքի և էներգիայի աղբյուրների համար։ «Այն դժվարությունները,— համագումարում նշեց Լ. Ի. Բրեժնևը,— որ ապրում է կապիտալիզմը, ազդում է նաև նրա քաղաքականության վրա, այդ թվում նաև արտաքին քաղաքականության վրա։ Սրվել է պայքարը կապիտալիստական երկրների արտաքին քաղաքական կուրսի հիմնական հարցերի շուրջ։ Վերջին ժամանակներս նկատելիորեն ակտիվացել են լարվածության թու-

լացման, սպառազինությունների սահմանափակման, Սովետական Միության և սոցիալիզմի մյուս երկրների հետ հարաբերությունների բարելավման հակառակորդներրս[5]։ Չնայած այս ամենին, Սովետական Միությունը շարունակում է ակտիվորեն վարել կապիտալիստական պետությունների հետ խաղաղ գոյակցության և փոխշահավետ համագործակցության, իմպերիալիզմի ագրեսիվ ոտնձգություններին հաստատուն հակահարված տալու լենինյան քաղաքականություն։ Խաղաղությունն ամրապնդելու, լարվածությունը թուլացնելու, սպառազինությունների մրցավազքը սանձահարելու նպատակով ՍՄԿԿ XXVI համագումարն առաջարկեց մի շարք նոր միջոցառումներ, որոնց կենսագործումը թույլ կտա ժողովուրդներին ազատել միջուկային պատերազմի սպառնալիքի վտանգից։ Համագումարը վերստին ընդգծեց, որ միջազգային տեսակետից այժմ մեր կուսակցության ու ժողովրդի, ինչպես նաև մոլորակի բոլոր ժողովուրդների համար չկա ավելի կարևոր խնդիր, քան խաղաղության պաշտպանությունը։ Պաշտպանելով խաղաղությունը, ասաց Լ. Ի. Բրեժնևը, մենք աշխատում ենք ոչ միայն այժմ ապրող մարդկանց համար, ոչ միայն մեր երեխաների ու թոռների համար. մենք աշխատում ենք գալիք տասնյակ սերունդների երջանկության համար։

Կուսակցության XXVI համագումարը բազմակողմանիորեն քննարկեց հասուն սոցիալիզմի ժամանակաշրջանում կուսակցության տնտեսական քաղաքականության հիմնական պրոբլեմները։ Նախ և առաջ վերլուծվեցին ՍՍՀՄ տնտեսական զարգացման 1970-ական թվականների և 10-րդ հնգամյակի հիմնական արդյունքները։ Համագումարը գոհունակությամբ նշեց, որ XXIV և XXV համագումարների մշակած տնտեսական ստրատեգիայի իրագործման շնորհիվ նոր խոշոր քայլ է կատարվել կոմունիզմի կառուցման ուղղությամբ, որակապես նոր մակարդակի են հասել սովետական հասարակության արտադրողական ուժերը, խորությամբ ու լայնությամբ է զարգանում գիտատեխնիկական հեղափոխությունը, Սովետական Միությունն առաջատար դիրքեր է գրավում գիտության կարևորագույն բնագավառներում։ Ահա որոշ փաստեր. ազգային եկամուտը 9-րդ հնգամյակի համեմատությամբ 10-րդ հնգամյակում աճեց 400, իսկ արդյունաբերական արտադրանքը՝ 717 մլդ ռուբլով։ Շարք մտան ավելի քան 1200 խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ։ Հնգամյակի տարիներին խոշոր միջոցառումներ իրականացվեցին գյուղատնտեսության մեջ։ Բավական է նշել, որ այդ նպատակով հատկացվել է ավելի քան 170 մլդ ռուբլի։ Չնայած կլիմայական անբարենպաստ պայմաններին, գյուղատնտեսության արտադրանքի տարեկան միջին աճը կազմեց 9%։ Հայտահայտիկի տարեկան միջին բերքը առաջին անգամ հասավ 205 մլն տոննայի, անցյալ տարի հավաքվեց գրեթե 10 մլն տոննա բամբակ[6]։ Նախորդ հնգամյակի տարիներին կուսակցությունը շարունակում էր վարել ժողովրդի կյանքի նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացման կուրս։ Հնգամյակի վերջերին բնակչության մոտավորապես կեսը ընտանիքի մեկ անդամի հաշվով ամսական ուներ ավելի քան 100 ռ. եկամուտ, այնինչ 1970 թ. այդպիսի եկամուտ ուներ միայն բնակչության 18%-ը։ Խոշոր մասշտաբներով շարունակվում էր բնակարանային շինարարությունը։ Շարք մտան 530 մլն մ² ընդ-

---

5 Նույն տեղում։

6 Նույն տեղում, 28. II. 1981։

հանուր տարածությամբ բնակելի տներ։ Դա նշանակում է, որ ավելի քան 50 մլն սովետական քաղաքացիներ բարելավել են իրենց բնակարանային պայմանները։ Այժմ քաղաքային բնակչության մոտ 80%-ն ապրում է առանձին բնակարաններում[7]։

Հարկ է նշել, որ 10-րդ հնգամյակի տարիներին նոր առաջընթաց թույլ կատարեց միութենական ու ինքնավար բոլոր հանրապետությունների էկոնոմիկան։ Դա կարելի է ցույց տալ Սովետական Հայաստանի օրինակով։ Հանրապետությունը ծանրակշիռ ավանդ է ներդնում երկրի տնտեսական կյանքում։ ՀՍՍՀ համախառն արտադրանքը 9-րդ հնգամյակի ընթացքում աճեց 38,5, իսկ ազգային եկամուտը՝ 48%-ով։ Արդյունաբերության հիմնական արտադրական ֆոնդերն աճեցին 1,5 անգամ։ «Դա նշանակում է,— ՀԿԿ XXVII համագումարում ասաց Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը,— որ միայն վերջին հնգամյակում արդյունաբերության արտադրական պոտենցիալը մեծացավ նախորդ 55 տարիների ընթացքում ստեղծվածի կեսի չափով»[8]։ 10-րդ հնգամյակի տարիներին Սովետական Հայաստանում կառուցվեցին և շահագործման հանձնվեցին արդյունաբերական ավելի քան 70 ձեռնարկություններ, խոշոր արտադրամասեր և արտադրություններ։ Արդյունաբերական արտադրության ծավալը աճեց 46,2%-ով։ Գյուղատնտեսության գծով հնգամյակի առաջադրանքները նույնպես կատարվել են ժամկետից շուտ։ Այս ամենի համար մեր հանրապետությունը հինգերորդ անգամ անընդմեջ արժանացավ ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի, Համկե-ի և ՀամԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ դրոշին։

Ըստ արժանվույն գնահատելով 10-րդ հնգամյակի արդյունքները, համագումարը միաժամանակ նշեց նաև թերությունները, դժվարությունները և չլուծված պրոբլեմները, որոնք դեռ կան և պետք է հաղթահարվեն։

11-րդ հնգամյակով Սովետական Միությունը թևակոխեց նոր տասնամյակ։ Համաժողովրդական քննարկումից հետո, որին մասնակցեց ավելի քան 121 մլն մարդ, համագումարը հաստատեց «ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1981—1985 թվականների և մինչև 1990 թվականն ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղությունները»։ Դա տեսական ու գործնական հսկայական կարևորություն ունեցող փաստաթուղթ է։ Երգրային այդ փաստաթղթում հիմնավորված են առաջիկա տասնամյակում կուսակցության տնտեսական քաղաքականության սկզբունքային դրույթները։ 1980-ական թվականներին կուսակցությունը հետևողականորեն կշարունակի իր տնտեսական ստրատեգիայի իրականացումը, որի գերագույն նպատակն է ժողովրդի կյանքի նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացումը։ Երկարաժամկետ խնդիրների իրականացման գործում պատասխանատու փուլ կդառնա 11-րդ հնգամյակը։ «Տասնմեկերորդ հնգամյակի գլխավոր խնդիրն է,—նշված է «Հիմնական ուղղություններում»,—ապահովել սովետական մարդկանց բարեկեցության հետագա աճը ժողովրդական տնտեսության հաստատուն, առաջընթաց զարգացման հիման վրա, գիտատեխնիկական առաջընթաց զարգացման հիման վրա, գիտատեխնիկական առաջադիմությունն արագացնելու և էկոնոմիկան

---

7 «Вопросы истории КПСС». 1981. № 1, с. 5.

8 «Սովետական Հայաստան», 23. I 1981։

զարգացման ինտենսիվ ուղու վրա փոխադրելու, երկրի արտադրական պոտենցիալն ավելի ռացիոնալ օգտագործելու, ռեսուրսների բոլոր տեսակներն լիա ամենայնի խնայելու և աշխատանքի որակը բարելավելու հիման վրա»[9]: Ելնելով դրանից, «Հիմնական ուղղությունները» սահմանում են արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության ու տեխնիկայի, մշակույթի զարգացման, արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխման, կառավարման մեխանիզմի կատարելագործման, արտաքին տնտեսական կապերի հիմնական ուղիները: Մեր էկոնոմիկայի աճի մասշտաբների մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար բավական է բերել հետևյալ տվյալները: 11-րդ հնգամյակում արդյունաբերական արտադրանքը կմեծանա 26—28%-ով, ըստ որում, արդյունաբերության «Բ» խմբի ճյուղերի արտադրանքն ավելի արագ տեմպերով կզարգանա, քան «Ա» խմբի ճյուղերինը: 1985 թ. Սովետական Միությունում կարտադրվի 1550—1600 մլդ կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա, 620—645 մլն տոննա նավթ, 600—640 մլդմ³. գազ, 770—800 մլն տոննա ածուխ:

Մեր էկոնոմիկայի հանգուցային պրոբլեմներից մեկը գյուղատնտեսության հետագա զարգացումն է: Հնգամյակում գյուղատնտեսական արտադրանքը կավելանա 12—14%-ով, 1,5 անգամ կավելանա հանքային պարարտանյութերի արտադրությունը: 1985 թ. երկիրը կստանա 234—243 մլն տոննա հացահատիկ, 9,2—9.3 մլն տոննա բամբակ, 18 մլն տոննա միս: «Եթե խոսելու լինենք ամբողջությամբ վերցրած գյուղատնտեսության մասին,— համագումարում նշեց Լ. Ի. Բրեժնևը,— ապա նրա առջև կանգնած է նույն գլխավոր պրոբլեմը, ինչ և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում՝ արդյունավետության և որակի բարձրացումը: ...Հիմա ծանրության կենտրոնը... տեղափոխվում է կապիտալ ներդրումների փոխհատուցման վրա, գյուղատնտեսության մթերատվության աճի ... վրա»[10]:

11-րդ հնգամյակի և ամբողջությամբ վերցրած 1980-ական թվականների համար կուսակցությունն առաջ է քաշում ժողովրդի բարեկեցության հետագա վերելքի լայն ծրագիր: Այն շոշափում է սովետական մարդկանց կյանքի բոլոր կողմերը. սպառումը և բնակարանը, կուլտուրան և հանգիստը, աշխատանքի և կենցաղի պայմանները: Ահա որոշ ցուցանիշներ: Բնակչության մեկ շնչին ընկնող ռեալ եկամուտները կավելանան 16—18%-ով, բանվորների և ծառայողների ամսական միջին աշխատավարձը՝ 13—16%-ով: Մշակվում է և կիրականացվի պարենային լայն ծրագիր, մեծ ուշադրություն կնվիրվի ժողովրդական սպառման առարկաներ արտադրող ճյուղերի զարգացմանը: Հնգամյակի տարիներին կավելացվի պետության օգնությունը երեխաներ դաստիարակող ընտանիքներին և նորապսակներին: Ավելի կբարելավվեն սովետական մարդկանց բնակարանային պայմանները: Նախատեսվում է կառուցել 530—540 մլն մ² տարածությամբ բնակարաններ: «Հիմնական ուղղություններում» ծրագրված է միութենական բոլոր հանրապետությունների էկոնոմիկայի և կուլտուրայի հետագա աճ: Մասնավորապես Հայկական ՍՍՀ-ի համար նախատեսվում է արդյունաբերական արտադրանքն ավելացնել 29—32, գյուղատնտեսության համախառն արտադրանքի տարեկան միջին ծավալը՝ 10—12%-ով:

---

9 Նույն տեղում, 5. III. 1981:

10 Նույն տեղում, 24. II. 1981:

Հաշվի առնելով հանրապետության բնակլիմայական պայմանները և յուրահատկությունները, խնդիր է դրվում ժողովրդական տնտեսության զարգացումը տանել արդյունաբերության աշխատատար, սակավ մետաղատար և սակավ էներգատար ճյուղերի ընդլայնման ուղղությամբ։ «Նախատեսված առաջադրանքների կատարումը,— ՍՄԿԿ XXVI համագումարում տված զեկուցման մեջ ընդգծեց Ն. Ա. Տիխոնովը,— կարագացնի միասնական ժողովրդատնտեսական կոմպլեքսի շրջանակներում միութենական հանրապետությունների էկոնոմիկայի համակողմանի զարգացման ու մերձեցման պրոցեսը։ Այդպիսի մոտեցումը լիովին համապատասխանում է կուսակցության լենինյան ազգային քաղաքականության սկզբունքներին»[11]։

Հասուն սոցիալիզմի պայմաններում, ինչպես նշված է համագումարին ՍՄԿԿ Կենտկոմի տված հաշվետվության մեջ, ավելի ու ավելի է սերտանում էկոնոմիկայի առաջընթացի փոխադարձ կապը հասարակության սոցիալ-քաղաքական և հոգևոր առաջադիմության հետ։ Այս տեսանկյունից էլ համագումարը քննարկեց կուսակցության խնդիրները մեր հասարակության սոցիալ-քաղաքական կառուցվածքի և ազգային հարաբերությունների զարգացման, նոր մարդու ձևավորման, սոցիալիստական ապրելակերպի, ՍՍՀՄ նոր սահմանադրության հիման վրա սովետական պետականության և դեմոկրատիայի կատարելագործման ուղղությամբ։ Ի՞նչ նոր միտումներ են նկատվել ՍՍՀՄ սոցիալ-քաղաքական կառուցվածքում։ Ամենից առաջ, ինչպես նշվեց համագումարում, շարունակվում էր սովետական հասարակության բոլոր դասակարգերի ու սոցիալական խմբերի մերձեցումը։ Բարձրանում է բանվոր դասակարգի առաջատար դերը հասարակության կյանքում։ Ներկայումս երկրում հաշվվում է շուրջ 80 մլն բանվոր։ Բանվորների երեք քառորդն ունի միջնակարգ և բարձրագույն կրթություն։ Նրանց աշխատանքն ավելի ու ավելի է լցվում մտավոր բովանդակությամբ։ Գյուղատնտեսական արտադրության ինդուստրացման համեմատ խոր փոփոխություններ են տեղի ունենում կոլտնտեսային գյուղացիության կյանքում։ Նրա 60%-ն ունի միջնակարգ և բարձրագույն կրթություն։ Գյուղացու աշխատանքն աստիճանաբար մերձենում է բանվորի աշխատանքին։ Վերջին տարիներին արագ էր աճում մտավորականների թիվը, որը հասարակության կյանքում ավելի ու ավելի նշանակալից դեր է խաղում։ «Մեր նպատակն է,— համագումարում նշեց Լ. Ի. Բրեժնևը,— ստեղծել մի հասարակություն, որի մեջ չի լինի մարդկանց բաժանում դասակարգերի։ Եվ կարելի է որոշակիորեն ասել, մենք աստիճանաբար, բայց վստահորեն առաջ ենք ընթանում դեպի այդ մեծ նպատակը։ Գնահատելով վերջին տասնամյակներում մեր հասարակության զարգացման փորձը, կարծում եմ կարելի է ենթադրել, որ հասարակության անդաստակարգ կառուցվածքի կազմավորումը գլխավորապես և հիմնականում տեղի կունենա հասուն սոցիալիզմի պատմական շրջանակներում»[12]։

Մեր հասարակարգին բնորոշ կողմերից մեկն էլ այն է, որ անշեղորեն ամրապնդվում է ժողովուրդների բարեկամությունը։ Սովետական ազգերի միասնությունը ամուր է, քան երբևէ։ Դա, ինչ իրոք, չի նշանակում, որ ազգային

---

11 Նույն տեղում, 28. II. 1981.

12 Նույն տեղում, 24. II. 1981.

հարաբերությունների ոլորտում բոլոր հարցերն արդեն լուծված են։ Մեր բազմազգ պետության զարգացման դինամիկան դնում է շատ պրոբլեմներ, որոնք պահանջում են կուսակցության զգայուն վերաբերմունք։

Կուսակցական շինարարության արմատական հարցերից մեկը կուսակցության անդամության հարցն է։ Դա շատ կարևոր է, չէ՞ որ կուսակցության կազմով է մեծ մասամբ պայմանավորված նրա գործունեության հաջողությունը։ Վ. Ի. Լենինը բազմիցս նշել է, որ անհրաժեշտ է բարձրացնել կուսակցության անդամի հեղինակությունը, բարելավել կուսակցության որակական կազմը, որը նրա ամրությունը, կայունությունը և մաքրությունը պահպանելու պայմաններից է։ «Մենք պետք է աշխատենք,— ՌՍԴԲԿ II համագումարում ասել է Վ. Ի. Լենինը,— կուսակցության անդամի կոչումն ու նշանակությունն ավելի, ավելի ու ավելի բարձրացնել»[13]։ Մի այլ առիթով նա գրել է. «...ցուցական անդամներ մեզ ձրի էլ հարկավոր չեն... ոչ թե ռեկլամի, այլ լուրջ աշխատանքի համար են հարկավոր մեզ կուսակցության նոր անդամները»[14]։ Ելնելով Լենինյան ցուցումներից, կուսակցությունը միշտ էլ կարևոր նշանակություն է տվել իր շարքերի աճի կարգավորմանը։ Մեր հասարակության զարգացման հետ միասին աճում, ամրապնդվում, առնականանում է կոմունիստական կուսակցությունը։ Այդպես էր նաև ՍՄԿԿ XXV համագումարից հետո։ Ներկայումս կուսակցության մեջ կա 17 մլն 489 հազար կոմունիստ։ Նրանց 43,4%-ը բանվորներ են, 12,8%-ը՝ կոլտնտեսականներ, 43,8%-ը՝ մտավորականության ներկայացուցիչներ։ Թեև XXV համագումարին նախորդող 5 տարում կուսակցության մեջ ընդունվել է 2,6 մլն մարդ, ապա համագումարից հետո անցած 5 տարում ՍՄԿԿ անդամների թիվը ավելացել է 1,8 մլն-ով։ Դա արդյունք է այն բանի, որ կուսակցական կազմակերպությունները ուժեղացրել են կարգավորող ազդեցությունը իրենց շարքերի աճի նկատմամբ, բարձրացրել են պահանջկոտությունը, խստիվ պահպանում են անհատական ընտրության սկզբունքը։ Այդ է վկայում նաև այն փաստը, որ նախորդ 5 տարում 9! հազար թեկնածուներ կուսակցության շարքերը չեն ընդունվել։ Կոմունիստի կոչումն արատավորած 300 հազար մարդ ՍՄԿԿ XXV համագումարից հետո անցած ժամանակամիջոցում վտարվել է կուսակցությունից։ Կարգավորելով իր սոցիալական կազմը, կուսակցությունը հետևողականորեն վարում է այնպիսի գիծ, որ առաջատար դերը պատկանի բանվոր դասակարգին, հարաճուն կերպով ավելանա բանվորական միջուկը։ Անցած հինգ տարիներին ՍՄԿԿ շարքերն են ընդունվել բանվոր դասակարգի ավելի քան 1,5 մլն լավագույն ներկայացուցիչներ, որ կազմում է կուսակցության ամբողջ համալրման 59%-ը։

ՍՄԿԿ հաջող գործունեության կարևոր պայմաններից մեկը կուսակցական կյանքի լենինյան նորմերի ու սկզբունքների անշեղ կիրառումն է։ ՍՄԿԿ XXVI համագումարն արձանագրեց, որ նախորդ համագումարից հետո զգալի աշխատանք է կատարվել ներկուսակցական դեմոկրատիայի հետագա ծավալման, կոլեկտիվ ղեկավարման սկզբունքի արմատավորման, կուսակցական ղեկավարման մեթոդների կատարելագործման ուղղությամբ։ Ներկուսակցական դեմոկրատիայի ծավալման դրսևորումներից մեկը կուսակցական կազմակերպությունների հաշվետու-ընտրական կամպանիան է, որ տեղի ունեցավ

---

13 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 7, էջ 363—364։

14 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 30, էջ 60—61։

XXVI համագումարի նախօրյակին։ Հաշվետվությունները կուսակցության շարքերի, կուսակցական ուժերի յուրահատուկ ստուգատես են, կոլեկտիվ գիտակցից կատարվածի մասին։ Հաշվետու-ընտրական ժողովները անցան բարձր ակտիվության պայմաններում։

Կոլեկտիվ աշխատանքի լավ օրինակ է տալիս ՍՄԿԿ Կենտկոմը։ Կուսակցության XXV համագումարից հետո կանոնավոր կերպով գործում էին Կենտկոմի պլենումները, քաղբյուրոն և քարտուղարությունը։ Բավական է նշել, որ այդ ժամանակամիջոցում տեղի է ունեցել Կենտկոմի տասնմեկ պլենում, քաղբյուրոյի 236, իսկ քարտուղարության՝ 250 նիստ[15]։ Դրանցում քննարկվել են երկրի տնտեսական զարգացման հիմնական միտումները, սոցիալիստական պետականության զարգացման, կուսակցության ազգային քաղաքականության, արտաքին քաղաքականության, կադրերի ընտրության և այլ կարևորագույն հարցեր։

ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումներում և փաստաթղթերում ձևակերպվեցին գաղափարախոսական և քաղաքական-դաստիարակչական աշխատանքի բարելավման հարցերը։ Համագումարը խնդիր դրեց հասնել այն բանին, որ գաղափարական աշխատանքի բովանդակությունը դառնա ավելի հրատապ, իսկ ձևերը համապատասխանեն սովետական մարդկանց պահանջներին ու հարցումներին։ Գաղափարական աշխատանքի կարևոր օղակներից մեկը կուսակցական ուսուցումն է, կոմունիստների մարքս-լենինյան կրթությունը, որին միշտ էլ սևեռուն ուշադրություն է նվիրվել։ Մեր կուսակցությունը կուսակել է բաղաքական կրթության կազմակերպման հարուստ փորձ։ Խնամքով պահպանելով այդ փորձը, ՍՄԿԿ-ն մշտապես կատարելագործում է կուսակցական ուսուցման սիստեմը։ Ինչպես նշվեց XXVI համագումարում, այժմ կուսակցական լուսավորության սիստեմում պարապում է գրեթե 23 մլն մարդ[16]։ Ընթացիկ ուսումնական տարում միայն Հայաստանում քաղաքական ուսուցման և տնտեսագիտական կրթության տարբեր ձևերում սովորում է մոտ 1 մլն մարդ[17]։ Վերջին տարիներին կուսակցական ուսուցումը ձեռք է բերել որակական նոր գծեր։ Նախ և առաջ ծանրության կենտրոնը փոխադրվել է մարքս-լենինյան տեսության, ՍՄԿԿ պատմության և քաղաքատնտեսության պրոբլեմների խոր ուսումնասիրության վրա։ Իսկ չէ՞ որ նախկինում գերակշռում էին տարրական դասընթացները։ Բացի այդ, նշանակալից չափով ավելացել է կուսակցական ուսուցման միջին և բարձր օղակների տեսակարար կշիռը։ Չնայած դրական այս միտումներին, կուսակցական ուսուցման կազմակերպման գործում դեռևս կան թերություններ, չլուծված հարցեր, որոնց մասին նշվեց կուսակցության XXVI համագումարում։ Խոսելով կուսակցական ուսուցման սիստեմի կատարելագործման անհրաժեշտության մասին, Լ. Ի. Բրեժնևն ընդգծեց, որ այդ գործում տակավին արմատախիլ չեն արվել ձևամոլության և աշակերտայնության դրսևորումները, որոնք, հասկանալի է, նվազեցնում են ունկնդիրների շահագրգռվածությունը տեսության նկատմամբ։ Շատ կազմակերպություններում երբեմն հրապուրվում են գործի քանակական կողմով,

15 «Սովետական Հայաստան», 24. II. 1981։

16 Նույն տեղում։

17 Նույն տեղում, 23. I. 1981

ունկնդիրների թվի չափազանց շատ ընդլայնումով։ Այնինչ կարևորը ուսուցման որակի բարելավումն է։ «Այս խնդիրը,— համագումարում նշեց Լ. Ի. Բրեժնևը,— անկարելի է լուծել առանց ավելի հիմնավոր մոտեցում ցուցաբերելու մեր պրոպագանդիստական կադրերի ընտրության, պատրաստության և նրանց ժամանակին ինֆորմացիա տալու նկատմամբ»[18]։

Մարքս-լենինյան կուսակցությունը չի կարող իր դերը կատարել, եթե պատշաճ ուշադրություն չի նվիրում տեսության ստեղծագործական զարգացմանը։ Այդ խնդրին մեծ ուշադրություն է նվիրվել XXV համագումարից հետո։ Զգալի գործ է կատարվել հասուն սոցիալիզմի կոնցեպցիայի մշակման ուղղությամբ։ Դրա հիման վրա կուսակցությունը կոնկրետացրել է մեր ծրագրային նպատակների իրականացման ուղիներն ու ժամկետները, սահմանել տեսական պատմական ժամանակաշրջանի ստրատեգիան ու տակտիկան։ Կուսակցական փաստաթղթերում և գիտական հետազոտություններում բացահայտվել են հասուն սոցիալիզմի զանազան կողմերը, համաշխարհային հեղափոխական պրոցեսի օրինաչափությունները, վերլուծվել է համաշխարհային սոցիալիզմի փորձը։ Մի շարք հետազոտություններ նվիրված են միջազգային բանվորական շարժման, կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի ժամանակակից փուլի և պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի պատմության պրոբլեմներին։ ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ և ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման վերաբերյալ փաստաթղթերում սահմանված են հասարակական, և ոչ միայն հասարակական, գիտությունների զարգացման կարևորագույն ուղղությունները, որոնք բարենպաստ պայմաններ են ստեղծում տեսական լուրջ ուսումնասիրություններ կատարելու համար։

Կուսակցության XXVI համագումարը որոշում ընդունեց ՍՄԿԿ ծրագրի նոր խմբագրության նախապատրաստման մասին։ ՍՄԿԿ գործող ծրագիրն ամբողջությամբ վերցված ճիշտ է արտացոլում հասարակական զարգացման օրինաչափությունները։ Սակայն նրա ընդունումից անցել է 20 տարի։ Այդ ժամանակաշրջանում կուտակվել է սոցիալիստական ու կոմունիստական շինարարության մեծ փորձ, մեր երկրում, ինչպես նաև միջազգային ասպարեզում տեղի են ունեցել կարևոր փոփոխություններ, որոնք պետք է արտացոլվեն կուսակցության ծրագրում։ Ելնելով այս ամենից, համագումարը ՍՄԿԿ Կենտկոմին հանձնարարեց անհրաժեշտ լրացումներ ու փոփոխություններ մտցնել կուսակցության գործող ծրագրի մեջ և նախապատրաստել ՍՄԿԿ ծրագրի նոր խմբագրություն՝ հերթական համագումարին ներկայացնելու համար։

ՍՄԿԿ-ն միջազգային կոմունիստական շարժման բաղկացուցիչ, անբաժանելի մասն է։ Մեր կուսակցության ամեն մի համագումար կարևոր իրադարձություն է նաև միջազգային կոմունիստական շարժման համար։ Սովետական Միության կոմունիստներն իրենց համագումարները դիտում են որպես հաշվետվություն ոչ միայն սեփական կուսակցության առջև, այլև բոլոր կոմունիստական կուսակցությունների, միջազգային բանվորական շարժման առջև։ Կոմունիստական շինարարության հաջողությունները Սովետական Միությունում, մեր երկրի հետևողական պայքարը պատերազմի վտանգի դեմ, նրա մշտական աջակցությունը ժողովուրդների ազատագրական պայքարին

18 Նույն տեղում, 24. II. 1981։

ՍՄԿԿ արժանի ավանդն է աշխարհի հեղափոխական նորացման ինտերնացիոնալ գործի մեջ։ Հիրավի, համաշխարհային պատմական նշանակություն ունեցող երևույթ էր նաև ՍՄԿԿ XXVI համագումարը։ Նրա աշխատանքին մասնակցեցին մեր մոլորակի 109 երկրների կոմունիստական, բանվորական, ազգային-դեմոկրատական և այլ կազմակերպությունների ու կուսակցությունների 123 պատվիրակություններ։ Մեր կուսակցության նախկինում տեղի ունեցած և ոչ մի համագումարում այդքան պատվիրակություններ ներկա չեն եղել։ Նրանց կազմում կային կոմունիստական, բանվորական և ազգային-ազատագրական պայքարի աչքի ընկնող գործիչներ։ Այս ամենը, ինչպես համագումարի բացման ժամանակ ընդգծեց ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամ, կուսակցության Կենտկոմի քարտուղար Մ. Ա. Սուսլովը, ինտերնացիոնալիզմի, արդիականության հեղափոխական ուժերի համերաշխության ու համախմբվածության գաղափարների կենսունակության համոզիչ վկայությունն է[19]։

ՍՄԿԿ XXVI համագումարը մշակեց ստեղծագործ աշխատանքի հոյակապ ծրագիր, նշեց առաջիկա տասնամյակի հրատապ խնդիրները։ Կյանքի կոչելով համագումարի որոշումները, սովետական մարդիկ նոր էջեր կգրեն կոմունիստական շինարարության տարեգրության մեջ։ «...Սովետական մարդիկ,— ասաց Լ. Ի. Բրեժնևը,— վստահությամբ են նայում վաղվա օրվան, սակայն նրանց լավատեսությունը բախտի սիրեցյալների ինքնավստահություն չէ։ Մեր ժողովուրդը գիտե. այն ամենը, ինչ ինքն ունի, ստեղծված է իր սեփական աշխատանքով, պաշտպանվել է իր սեփական արյամբ։ Եվ մենք լավատեսներ ենք, որովհետև հավատում ենք աշխատանքի ուժին, որովհետև հավատում ենք մեր երկրին, մեր ժողովրդին։ Մենք լավատեսներ ենք, որովհետև հավատում ենք մեր կուսակցությանը, գիտենք, որ նրա մատնանշած ուղին միակ ճշմարիտ ուղին է»[20]։

XXVI СЪЕЗД КПСС

ГРИГОР АЙВАЗЯН

Резюме

XXVI съезд КПСС—знаменательное событие в жизни партии и советского народа. Съезд подвел итоги минувшего пятилетия, определил очередные задачи партии в области внутренней и внешней политики. В отчетном докладе съезду Л. И. Брежнев осветил многогранную деятельность партии по претворению в жизнь решений предыдущего съезда, дал всесторонний анализ международного положения и мирового революционного процесса.

Съезд принял научно обоснованную программу дальнейшего развития нашего общества. Эта программа нашла конкретное воплощение в основных направлениях экономического и социального развития страны в одиннадцатой пятилетке и на период до 1990 года.

В восьмидесятые годы партия будет последовательно продолжать осуществление своей экономической стратегии, высшая цель которой—неуклонный подъем материального и культурного уровня жизни народа.

19 Նույն տեղում։

20 Նույն տեղում։